Հաշվետվություն

2019 թվականի սեպտեմբերի 4-ից 5-ը կայացած Ասիայի տարածաշրջանի երկրների ջրային ոլորտի կայուն զարգացման խթանման համար <<ԿԶՆ 6 քաղաքականության աջակցման համակարգի օգտագործում>> խորագրով աշխատաժողովի վերաբերյալ

Ս.թ. սեպտեմբերի 4-ից 5-ը մասնակցել եմ Դեգու քաղաքում /Կորեայի Հանրապետություն/ կայացած Ասիայի տարածաշրջանի երկրների ջրային ոլորտի կայուն զարգացման խթանման համար <<ԿԶՆ 6 քաղաքականության աջակցման համակարգի օգտագործում>> խորագրով աշխատաժողովին:

Առաջին օրը, օրվա առաջին հատվածում ներկայացվեցին Կայուն զարգացման համար ՄԱԿ գրասենյակի գործունեությունը, համընդհանուր նախաձեռնություններն՝ ուղղված գլոբալ մոնիտորինգին, ԿԶՆ 6 տվյալների պորտալի, ԿԶՆ քաղաքականության աջակցման համակարգի օգտագործման մասին: Երկրորդ հատվածում աշխատաժողովի մասնակիցներով ներկա գտնվեցինք Կորեայի ջրային համալիրում, որտեղ ծանոթացանք այդ համալիրի առանձնահատկություններին: Համալիրն ուղղված է ջրային ոլորտի բիզնեսի զարգացմանը, այդ թվում՝ ընկերությունների համար բարվոք միջավայր ապահովմամբ, ջրային կառավարման տեխնոլոգիաների նորարարությունների խթանմամբ, ջրային ոլորտում տաղանդների հայտնաբերմամբ և զարգացմամբ, համաշխարհային շուկա ակտիվորեն մուտք գործելու ընթացակարգի ստեղծմամբ:

Երկրորդ օրը ներկայացվեց Կորեայի կողմից արձանագրված փորձը ԿԶՆ 6-ի քաղաքականության աջակցման համակարգի օգտագործման տեսանկյունից: Որից հետո, տարածաշրջանը ներկայացնող մի քանի այլ երկրների ներկայացուցիչների հետ միասին մասնակցեցի ներկայացված փորձի վերաբերյալ քննարկմանը, ներկայացրեցի այն տեսակետը, որ հեռահար նպատակների դեպքում, ինչպիսին է ԿԶՆ 6-ը, խնդիրների լուծումը նպատակահարմար է դիտարկել պետական հոգածության ներքո և

քաղաքական հստակ որոշումների պարագայում: Այս միայն լուծումները կլինեն երկարատև և արդյունավետ: Օրինակ բերեցի նաև ԿԶՆ 6 մոնիտորիգի շրջանակներում Հայաստանի կողմից արձանագրված փորձը 2017 թվականին, որն իր լուման ունեցավ ԿԶՆ 6 տվյալների գլոբալ հավաքագրման մեջ:

Մինչև 2030թ. Կայուն զարգացման նպատակ 6-ին հասնելը, ակնկալվում է, որ երկրները՝ դեպի կայունությանն ուղղված իրենց ճանապարհին կհասնեն կարևոր փուլերի, քանի որ ջրամատակարաման և ջրահեռացման հաջող կառավարումը հիմքն է ուղղակի կամ անուղղակի ջրային ոլորտի այլ ԿԶՆ 6 ցուցանիշների:

Արդյունավետ պլանավորումը և քաղաքականության իրականացումը շրջակա միջավայրը ամրապնդելու և վերափոխելու միջոցով խիստ կարևոր են կայուն զարգացման նպատակներին հասնելու համար, մասնավորապես, ջրային ոլորտին առնչվող SDG-ների ազգային մակարդակում հաջողության հասնելու համար: Ինչևէ՝ այն իրականացնելու համար քաղաքականություն մշակողների և խթանող կողմերի համար փաստերն ու ճշգրիտ տվյալները բացակայում են, մասնակի են կամ նույնիսկ աղճատված Ասիայի տարածաշրջանի շատ երկրներում:

Եթե երկրները ցանկանում են հասնել ԿԶՆ 6 իրականացմանը, նրանք պետք է գնահատեն իրենց ներկա ազգային առաջընթացի արդյունավետությունը: Սա նշանակում է սահմանել բացերը և թերությունները, բարելավել դրանք գործող քաղաքականությունների, գործողությունների պլանի, շրջակա միջավայրի խթանելու միջոցով: Այս երկրները նույնպես պետք է հստակեցնեն իրենց ազգային ելակետերը, թիրախները, առաջնահերթությունները SDG-ին հասնելու հիմնական գործընթացներում՝ կենտրոնանալով այն հարցերի շուրջ, որոնք իրատեսական են մինչև 2030թ:

2016-2018 ԿԶ ՄԱԿ-ի գրասենյակը և ՄԱԿ ջրի, շրջակա միջավայրի և առողջապահության ինստիտուտը՝ Կորեայի շրջակա միջավայրի նախարարության և Կորեայի բնապահպանական ընկերության հետ համատեղ, ուսումնասիրել են տարբերակներ՝ տվյալների անբավարար պայմաններում, աջակցելու

քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանն ուղղված SDG 6-ին արդյունավետ հասնելու հարցում:

<<Այն ջուրը, որ ուզում ենք աշխարհում>> ծրագրի առաջին փուլի ընթացքում գործընկերները մշակել են մի համակարգ փորձագետների և որոշում կայացնողների միջև ապացույցների վրա հիմնված համագործակցությունը հնարավոր դարձնելու և SDG-ի հնարավոր միջավայրի ամրապնդմանը նպաստելու համար:

Հինգ երկրներ՝ Գանա, Թունիս, Պակիստան, Կոստա Ռիկա և Կորեայի Հանրապետություն, իրականացրել են <<առաջնակարագության համակարգ>> ծրագրի առաջին փուլը, որում մեկ քաղաքականության մշակող և մեկ փորձագետ կամ գիտնական յուրաքանչյուր երկրում պատասխանատու են ծրագրի խթանումն ու համակարգումը ապահովելու համար, SDG 6 քաղաքականությանը աջակցող համակարգի զարգացման համար: Համաձայն համացանցային գործիքի վրա հիմնված ծրագրի՝ նույնիսկ սահմանափակ տվյալների պայմաններում ուղղորդում և օգնում են քաղաքականություն մշակողներին՝ հիմնվել ընդհանուր միտումների, տեղեկատվության և ապացույցների վրա՝ ազգային քաղաքականության ջրային ոլորտին վերաբերող հարցերի լուծման ժամանակ:

Ներկայումս փորձելու ենք առաջ շարժվել և որպես ՄԱԿ անդամ երկիր հետևել բոլոր նախաձեռնություններին, ինչպիսիք են ԿԶՆ 6 պորտալի՝ Հայաստանի մասով տվյալների ներդրման աշխատանքներին, ԿԶՆ 6 միջոլորտային մոնիտորինգի խմբի համատեղ աջակցությամբ:

Վարդան Մելքոնյան